ԹԱՆԱՏԵՂԾԱԿԱՆ

ԴԱՌՆ ԱՂՕԹՔ

Սրբէ՛ զիս, Տէ՛ր, ամորհիդ ցօղովն անանցական.
Անշոյլնեռուն մեղին եղայ ես կոչնական.
Մոլորութեան վարձկանն եղայ ես անվարան.
Սրբէ՛ զիս, Տէ՛ր, ամորհիդ ցօղովն անանցական:

Պայծառացո՛ւր զիս, Տէ՛ր, լոյսովդ անտրտմական.
Հերի՛ք մութին ես ուղեւորն ըլլամ անջան.
Հերի՛ք կառչիմ ես կարքերուն սուտին սատան.
Պայծառացո՛ւր զիս, Տէ՛ր, լոյսովդ անտրտմական:

Պարգեւէ, Տէ՛ր, խաղաղութի՛ւնդ անսասան.
Շա՛տ է կրծէ զիս կասկածին խոցը դաժան.
Շա՛տ է խռովին լինիմ ես որսն անապատան.
Պարգեւէ, Տէ՛ր, խաղաղութի՛ւնդ անսասան:

Արժան ըրէ՛ զիս, Տէ՛ր, սիրոյդ անդաւանան.
Բա՛ւ է տանջէ անյուսութեան զիս ցաւն այնքան.
Բա՛ւ է չարին մագիլներուն լինիմ կոխան.
Արժան ըրէ՛ զիս, Տէ՛ր, սիրոյդ անդաւանան:

Ն. ԿԱՏԱՐ

ՄԱՀՈՒԱՆ

Կը մօտենամ քեզի ես քիչ մ'աւելի ամէն օր,
Կը մօտենամ քեզի Մահ, խորհուրդիդ մէջ անաւոր
Որ կը լուծես ամէն ձեւ, ամէն ձրգտում երկրաւոր:

Կը բերեմ քեզ իբր ընծայ սիրտս Սափոր մը լեցուն
Երազներով, վիշտերով — նոր գինիով պաղպաջուն —
Քու միջոցովդ գուցէ ընծայելու Աստուծոյն:

Ա՛ռ, ըրէ ինչ որ կամիս... գիտցիր ով Մահ դուն սակայն,
Թէ ըմպելի մը ուրիշ — յաւիտեանէ յաւիտեան —
Պիտի երբեմ չունենայ ճիշտ տրուածիս հոտն ու համ:

Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ